ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ապրիլի 2026 թվականի N 1599

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը		
	համարը	անվանումը	գնման գինը/ՀՀ դրամ/						
1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/29	24	Թուղթ A4	3240000	«ԱԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	08302234	ք. Երևան, Աղբյուր Սերոբի փողոց, շենք 11, բնակարան 59	26.03.2026թ.	ՀՀ Կոտայքի մարզ Աբովյանի համայնքապետարան	«ԱԷՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված «ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/29» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 7-րդ ենթակետի 4-րդ պարբերություն (խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը), «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետ (որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելու իրավունքից և e-Auction համակարգում չի կցել իր կողմից էլեկտրոնային ստորագրված պայմանագիրը):

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետում և կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. ապրիլի 03
ք. Աբովյան